

իրեն: Պէտք չէ անգիտանանք թէ ինչ որ հայը երէկ գործեց, այսօր գաղափար ու նշանաբան է դարձած եւրոպական մեծագոյն պետութիւններու անգամ, որոնք արժանապատուութեան խոր գիտակցութիւնն եւ ազատութեան պաշտամունքն ունին:

Միայն եւ միայն հշմարտութեան եւ ազատութեան համար է որ հայը կը մեռնի, խուսերով վատութենէ եւ ուրացութենէ: Ապա թէ ոչ ինչպէս բացատրել, ուսկից մեկնել այդ գերագոյն ոյժը որ նիւթական կեանքէն ծանր կը կշռէ անոնց հոգիներուն: Այդքան աւերակ առանց հուրի՛ եւ սուրի՛...: Ո՞ր ողջամիտ իմաստասիրութեան դրութիւնը պիտի արդարացնէ զայդ:

Մենք մեր ցեղին հին երգը պիտի նուագենք, մենք զոհաբերութեան կոչն է որ պիտի ընենք ընդհակառակն եւ մարտիրոսութեան, եւ ատոր համար կը բաւէ յիշել մեր հայրերու օրինակը, անոնց արիւնը որ կը միայ դեռ, անոնց՝ որ հայրենի աւերակներուն եւ Միջագետքի ամայութեանց մէջ դեռ կը մնան անմաղ, անշիրիմ, եւ մեր սրտերը կսկիծով, արցունքով, աղապատանքով, եմէ ոչ ոսկրները՝ գէթ իրենց յիշատակները, կտակը, սէրը, նուիրական հոգին ու գաղափարն է որ պիտի ամփոփեն, նոյն այդ սրտին մէջ. այդպէս կատարած կ'ըլլանք մեր որդիական եւ եղբայրական պարտքը, եւ հայր պարտքը: Եթէ մեր ցեղը չգիտնար զոհաբերութիւն կրօնքի եւ հայրենիքի սեղանին վրայ, այսօր վասակներ պիտի դառնայինք ամէնքս, դաւելով մեր քրիստոնէութեան եւ հայրութեան. ասիկա բացարձակ հշմարտութիւն է: Բայց մեր մարտիրոսութեան մէջ լաւ ըմբռնած է քաղաքակիրթ եւրոպան մեր մեծութիւնը, եւ յամօթ իր վատութեան՝ հրապարակաւ կը խոստովանի. «Մեծագոյն եղեւնը քաղաքակրթութեան հանդէպ՝ հայուն ազատութիւն չտալն է»: Անոնք չտուին ու չեն տար զայն, քանի որ շահն է իրենց միջը եւ ոչ արդարութիւնը. մեր ազատութիւնը մերն է եւ մեզմով միայն պիտի իրագործուի: Հեռանալու, մոռանալու չարիքներ կան, անշուշտ, եւ ատոնք կուսակցական կոյր պայքարներն են, պառակտումները, քայքայումները՝ փոխադարձ ատելութեամբ: Հեռանալով, մոռանալով այդ չարիքները, որ իսկական մահն են մեր ցեղին, բայց ոչ զոհաբերութիւնն եւ մարտիրոսութեան վարժութիւնը որ մեր յարութեան յոյսն է: —

Կը բացուի շիրիմը, եւ իր թռիչքը կ'առնէ Աստուածամարդը՝ նահատակ ամբողջ մարդկութեան համար, յոյս բովանդակ մարդկութեան: Կը բացուին մեր շիրիմներն ալ, կը յայտնեն մեր նահատակներն ալ Աստուածամարդուն հետ, եւ կը նորոգուին մեր ցեղին յոյսերը: Ու մեռելոց օրը հայ նահատակներու յարութեան օրն է, Քրիստոսի պէս եւ Քրիստոսի հետ. անոնց յարութիւնը մեր յոյսն է, չքնաղ եւ անմահունակ: Անշուշտ մարգարէական շունչով էր որ խալկական փերու վրայ կ'երգէր հայ սիբիլան՝ Աղանուր. կը տեսնէր լեղին, պատառուած կողը, ձաղկանքն ու ձաղանքը, խաչելութիւնը անէծքի փայտին վրայ, եւ հուսկ «հրաշափառ յարութիւնը». «Armenia! la tua Pasqua è vicina = Հայաստան, քու Զատիկդ մօտալուտ է»:

Ապրիլեան մեր Նահատակներու օրն ուրեմն՝ հեռու սգատօն մ'ըլլալէ, յոյսի եւ յարութեան ներշնչումներու աղբիւրն է. եւ այդ հոսանքով կը նորոգուին մեր հոգիները, եւ կը դառնան սիրոյ եւ արցունքի խնկանուէր պաշտումով՝ սուրբ սեղաններ եւ շիրիմներ կենդանի, բոլոր անոնց՝ որոնց մերժուեցան հողերէն շիրիմներ այս արեգակին տակ:

* * *

Նահատակներու հետ նահատակ, գաղափարի հերոս, վերածնող հայ հոգւոյն եւ նուիրական սրբութեանց, Մեծն Մխիթար ալ իր խնկելի յիշատակն եւ անունը կը խառնէ Ապրիլի ժպիտներուն կենսայից. եւ ո՞վ կրնայ մոռնալ զայդ: Իրմէ աւելի որոշն

կրնանք կրկնել սուրբ եւ քերթողահայր Խորենացոյ պատգամը «Մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եմող»:

Վերածին հայութիւնն իսկ է Մխիթարի անմահութիւնը. անոր ճանաչած գիտութեան եւ հշմարտութեան սիրով հրդեհուած հայութիւնն է որ երախտապարտ սրտով կը խոնարհի մեծութեան առջեւ, ու լուսանորոգ տիտղոսով կը տանի կը բազմեցնէ զանի մինչեւ անստոյգ բարձունքը Լուսաւորչի բախտին եւ փառքին:

Սակայն հարկ է Մխիթարի մեծութիւնը կշռել իր առաքելութեան սրբազնութենէն, իր գործին ընդթէն, անոր տեւականութենէն:

Մխիթար մեծ չկոչուեցաւ պարզապէս անոր համար որ դար մը ստեղծեց, լոյս տուաւ իր ցեղին, լոյսը իր հայրենի տաճարին փառքերուն: Իր անունը՝ ինչպէս մարդտուաւ իր ցեղին, լոյսը իր հայրենի տաճարին փառքերուն, իր յաղթանակը՝ ինչպէս ամէն կուտեան մեծամեծ եւ ստեղծագործող հանճարներուն, իր յաղթանակը՝ ինչպէս ամէն քաղաքակրթական կամ իմացական նուաճում, կրնար նուաղիլ, չքանալ:

Եւ Մխիթար ժամանակի եւ անշրպիտի անեղութեան դէմ՝ աստուածօրէն կանգնեցաւ. ինք իր անձով եւ գաղափարով ուզեց անմահանալ եւ տիրապետել հայրութեան վրայ, ամենուրեք:

Հաստատութիւնը՝ որ իր անունը կը կրէ, ինքն իսկ է որ կ'ապրի ու կը գործէ, նոյն կենսատու ջանով լուսաւորելու հայ միտքը, ջերմացնելու հայ սիրտը, որ ապրի եւ գործէ քաղաքակիրթ մեծ ազգերու շարքին մէջ հնուեամբ պանծալի եւ նորութեան մէջ կենսունակ:

Հ. ԵՂԻՍ. ՓԵՃԻԿԵԱՆ



Մ Խ Ի Թ Ա Ր Ա Բ Բ Ա Ն Օ Ր

Այսօր, ո՞վ Հայր, երգեցի ինչպէս որ հովը կ'երգէ
Անտառներուն ողբաձայն շանթաճարուէլը մըլին,
Ինչպէս կոհակն ամէհի վըսեմութիւնն ովկիանին՝
Կղզեակիդ փառքն ըսպիտակ, որ մաքիդ կայծն է լուսէ:

Երգեցի, Հայր, ինչ որ սիրտս եւ գոյութիւնըս համայն
Ներշնչեցին քընարիս լարերն վըհատ եւ յոգնած.
Ինչ որ հոգիս ջրվէժեց, եւ ինչ որ միտքըս յանկարծ՝
Երակներէս փոթորկեց տեղաարափի մը նըման:

Տուր սակայն, Հայր, տուր ինձի օգնութեան ձեռք մը բարի,
Տուր իմ Թշուառ անգոհիս խաղաղութիւնն երկնային,
Եւ մուծին մէջ խարխափող հաւատքիս ընդ արփալի:

Տուր, զի անի ես անապակ իմ հոգեկան կերտուածքին,
Իմ գոյութեանս ուռճացող առաջին վանկը անհուն,
Եւ վըսեմին սուրացող իղձերուս բոցն անանուն:

ՆՐԱՄՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ